«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հաստատվել է «Երևանի Մխիթար Հերացու
անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի
գիտական խորհրդի 2023 թվականի մայիսի 31-ի 23-05-08-11 որոշմամբ

Ռեկտոր՝ Արմեն Մուրադյան

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԱՐՉԱԿԱՆ, ԿԼԻՆԻԿԱԿԱՆ, ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) պարտավորությունների բախման կանխարգելման քաղաքականությանը նպատակն է (այսուհետ՝ Քաղաքականություն) պահպանել Համալսարանի մրցակցային առավելությունները, հավաքագրել

ամբողջական տեղեկատվություն Համալսարանի աշխատողների շարունակական զարգացման վերաբերյալ, ապահովել Համալսարանի աշխատողների բարեվարք վարքագիծը, հնարավորինս կանխարգելել պարտավորությունների բախման դեպքերը:

2.Սույն Քաղաքականության իմաստով պարտավորությունների բախում է համարվում իրավիճակը, երբ Համալսարանի վարչական, կլինիկական, ակադեմիական կամ գիտական անձնակազմն ներկայացնող աշխատողի (այսուհետ՝ Աշխատող) կողմից Համալսարանից դուրս աշխատանքային պարտականությունների իրականացումը կամ ծառայությունների մատուցումը (վճարովի կամ անվճար) կամ այլ գործունեության իրականացումը խոչընդոտում կամ վնասում է Համալսարանում Աշխատողի պարտականությունների պատշաճ իրականացմանը կամ որևէ այլ կերպ կարող է ազդել Համալսարանի կողմից մատուցվող ծառայությունների մրցակցային առավելությունների վրա:

2.ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.Պարտավորությունների բախումից խուսափելու նպատակով՝

1) Աշխատողը համատեղության կարգով աշխատանք կատարելու դեպքերում, նախապես գրավոր տեղեկացնում է Համալսարանի ռեկտորին՝ հաշվի առնելով ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ համատեղությամբ աշխատանք կատարելու մասին իրավակարգավորումները և Համալսարանում գործող այլ իրավական ակտերի պահանջները.

2) Աշխատողը միջին մասնագիտական, բարձրագույն և հետբուհական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում, այլ կազմակերպություններում ուսումնական, կրթական, գիտական կամ այլ գործունեության մեջ, այդ թվում կոլեգիալ բնույթ ունեցող գործունեության մեջ ներգրավելիս, այդ մասին նախապես գրավոր տեղեկացնում է Համալսարանի ռեկտորին կամ համապատասխան ոլորտը համակարգող պրոռեկտորին կամ դեկանին.

3) Աշխատողները ոչ ուշ, քան առնվազն 7 աշխատանքային օր առաջ, իսկ հրատապ կամ նախապես չպլանավորված դեպքերում 3 աշխատանքային օր առաջ գրավոր կարգով՝ համաձայն Ձև 1-ի կամ Ձև 2-ի, Համալսարանի Համալսարանի ռեկտորին կամ համապատասխան ոլորտը համակարգող պրոռեկտորին կամ դեկանին

տեղեկացնում է այդ թվում օտարերկրյա բժշկական, դեղագործական, առողջապահական կամ հասարարական մասնագիտական կազմակերպությունների կողմից կազմակերպվող շարունակական մասնագիտական զարգացմանն ուղղված կամ գիտահետազոտական միջոցառումներում որպես կազմակերպիչ կամ մոդերատոր (սեսիայի ղեկավար) ներգրավվելու մասին:

3.ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԵՐԵՎՈՒՅԹ ԲԱԽՄԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

4.Սույն քաղաքականության 4-րդ կետի 2-րդ, 3-րդ ենթակետերով նախատեսված գրավոր տեղեկացումներում պարտավորությունների առերևույթ բախման դեպքերի քննության, ինչպես նաև պարտավորությունների բախման կամ դրա բացակայության մասին եզրակացություն տալու նպատակով Համալսարանի ռեկտորի հանձնարարությամբ դեպքը կարող է քննվել հանձնաժողովային կարգով, որի եզրակացություններն ունեն խորհրդատվական բնույթ:

4.ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9.Համալսարանը պարտավոր է՝
1) պարտավորությունների բախման դեպքերի կանխարգելման նպատակով աշխատողի խնդրանքով տրամադրել համապատասխան խորհրդատվություն.
2) ստեղծել վստահելի միջավայր պարտավորությունների բախման դեպքերը բացահայտելու և քննարկելու համար.
3) պարտավորությունների բախման ոլորտում գործել սույն Կանոնակարգի պահանջների համաձայն:

5.ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

10.Սույն քաղաքականության պահանջները տարածվում են այն ընդունելուց հետո ծագած հարաբերությունների նկատմամբ, ընդ որում, սույն քաղաքականության 3-րդ կետի 1-ին ենթակետը գործողության մեջ է մտնում ՀՀ աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 2023 թվականի մայիսի 3-ի ՀՕ-160-Ն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո:
11. Սույն քաղաքականության պահանջներն ապահովող դրույթները սահմանված են Համալսարանի համապատասխան իրավական ակտերում:

Ձև 1

«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

----------ԻՑ

Սույնով տեղեկացնում եմ, որ 202---- թվականի -ի -ից մինչև -ի -ը որպես կազմակերպիչ, մոդերատոր (սեսիայի ղեկավար) (ընդգծել) մասնակցելու եմ_____(նշել կազմակերպության անվանումը) կողմից կազմակերպվող շարունակական մասնագիտական զարգացմանն ուղղված միջոցառմանը_____ _____(նշել դասընթացի անվանումը):

Անուն, ազգանուն, պաշտոն, ստորագրություն, օր, ամիս, տարի

Ձև 2

«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

----------ԻՑ

Սույնով տեղեկացնում եմ, որ 202---- թվականի -ի -ից մինչև -ի -ը որպես կազմակերպիչ, մոդերատոր (սեսիայի ղեկավար) (ընդգծել) մասնակցելու եմ _____(նշել կազմակերպության անվանումը) կողմից կազմակերպվող _____ _____(նշել գիտահետազոտական միջոցառման անվանումը):

Անուն, ազգանուն, պաշտոն, ստորագրություն, օր, ամիս, տարի